# «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

## ՇՆՈՐՀԱՎՈՐ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԴ, ՍԻՐԵԼԻ «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Անձամբ ես «Վրաստանի» հետ սերտորեն առնչվեցի Ախալքալաքիի կուսակցության շրջկոմի առաջին քարտուղար աշխատելու տարիներին: Հիշում եմ՝ ինչ ոգեւորություն ու բերկրանք էր առաջացնում թերթի աշխատակիցների այցը Ախալքալաքի:

Անժխտելի էր թերթի ավանդը ախալքալաքցիներին եւ ոչ միայն նրանց, այլեւ ողջ վիրահայությանը հուզող հիմնախնդիրների կարգավորման, երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրանց ինտեգրման, լեզվական արգելքի հաղթահարմանն ուղղված պետական լեզվի ուսուցման ծրագրի իրականացման, երկրում ծավալվող իրադարձությունների, օրենսդրական փոփոխությունների, երկրի կյանքում տեղի ունեցող նշանակալի տեղաշարժերի վերաբերյալ օբյեկտիվ, ճշգրիտ տեղեկատվության փոխանցման գործում:

Անժխտելի է նաեւ այն փաստը, որ դրանում մեծ է պարբերականի երկարամյա ղեկավար, պրոֆեսիոնալ լրագրող Վան Բայբուրթյանի, խմբագրության արհեստավարժ աշխատակիցների դերը:

Թանկագի'ն «վրաստանցիներ» շնորհավորում եմ մեր սիրելի «Վրաստանի» հոբելյանի առթիվ: Թերթին՝ երկարակեցություն, իսկ աշխատակիցներին՝ առողջություն, երջանկություն եւ ստեղծագործական հաջողություններ:

*ԳԻՎԻ ՇՈՒԳԱՐՈՎ*

## «ՎՐԱՍՏԱՆԸ»՝ ԻՄ ԿՅԱՆՔԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՈՒՂԵԿԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Անչափ ուրախ եմ, իմ սիրելի «Վրաստան», որ դու կաս, կրթում ու դաստիարակում ես սերունդներ, քո ընթերցողին ճանաչել ես տալիս ավանդական ու համամարդկային արժեքները, խորացնում մեր երկու երկրների՝ Վրաստանի ու Հայաստանի եւ մեր ժողովուրդների միջեւ դարավոր բարեկամությունը:

Շնորհավոր քո 100-ամյա հոբելյանը, սիրելի պարբերական, ցանկանում եմ, որ բեղմնավոր ու հարատեւ լինի ընթացքդ: Երախտագիտությունս՝ խմբագիր Վան Բայբուրթյանին ու ողջ խմբագրակազմին:

Լավագույն բարեմաղթանքներով՝

*ԳԱՐԵԳԻՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

КՐԹԱԿԱՆ

# ԲՈԼՈՐԻՆ, ՈՎ ՍՈՎՈՐՈՒՄ Է ԵՎ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ, ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՆՈՐ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐ ԿՀԱՃԱԽԵՆ 361 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐ



Նինոծմինդայի մունիցիպալիտետի հանրային դպրոցներում 2021-2022 ուսումնական տարում կունենանք 361 առաջին դասարանցի: Առաջին դասարանցիների համար ուսումնական տարին կմեկնարկվի հոկտեմբերի 4-ին, որի կապակցությամբ ցանկանում ենք շնորհավորել մեր փոքրիկներին՝ ցանկանալով նրանց բարի ընթացք, աշխատասիրություն, լինեն մեր արժանապատիվ ապագան կերտողներ:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի հանրային դպրոցներում կար 264 շրջանավարտ, նրանցից շատերը կրթությունը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատություններում: Շրջանավարտների հետ զրույցի արդյունքում պարզվել է, որ 60 տոկոսը ցանկություն ունի ընդունվել վրացական, իսկ 20 տոկոսը հայկական եւ արտասահմանյան բուհեր:

2020-2021 ուստարում ունեցել ենք 31 ոսկե եւ 9 արծաթե մեդալի թեկնածու: Ուրախությամբ կարող ենք նշել, որ մեր մունիցիպալիտետի դպրոցների ուսուցիչներից շատերը այս տարի մասնակցել են ուսուցիչների մասնագիտական որակավորման քննություններին, եւ արդյունքում՝ շատերը ձեռք են բերել ավագ ուսուցչի կոչում, ինչի համար եւս ցանկանում ենք շնորհավորել բոլորին եւ մաղթել նորանոր հաջողություններ: Կարծում եմ՝ ուսուցչի հաջողակ լինելը խոսում է մեր հաջողակ, կիրթ եւ կրթված լինելու մասին:

Մեր այս տարվա ձեռքբերումներից կարող ենք նշել նաեւ որոշ դպրոցների վերանորոգման գործընթացը: Վերանորոգման աշխատանքներ են ընթանում Նինոծմինդա քաղաքի թիվ 1 հանրային դպրոցում: Վերանորոգման աշխատանքները հավանաբար կավարտվեն նոյեմբերի վերջին: Վերանորոգվում են նաեւ Մեծ Արագյալ եւ Ղաուրմա գյուղի հանրային դպրոցների շենքերը, հիմնովին նորակառույց շենքում կվերսկսվի նոր ուսումնական տարին Օռլովկա գյուղի հանրային դպրոցում:

Մի քանի դպրոցներում կառուցվել են սանհանգույցներ ժամանակակից պահանջներին համապատասխան:

*ԴԱՎԻԹ ՋԵԴԳԻՆԻՁԵ*

*Նինոծմինդայի ռեսուրս-կենտրոնի տնօրեն*

## ԸՆԴԱՄԵՆԸ 3 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ, ԲԱՅՑ...

*Եվս մեկ ուսումնական տարի սկսեց իր ընթացքը... Ոսկե աշունը ոգեշնչեց շատ երեխաների եւ հրավիրեց գիտելիքների դպրոցական երկիր:*



Գիտելիքների ճանապարհը միշտ էլ հաճելի ու դժվար է եղել: Այն առավել դժվարանում է արտակարգ պայմաններում: Սակայն մեր դպրոցը ոչ միայն կարողանում է իր առջեւ նպատակներ դնել, այլեւ հաղթահարել առաջացող դժվարությունները: Գիտելիքների տոնը համավարակի պատճառով ստիպված ենք եղել տոնել անսովոր պայմաններում, բայց ստեղծված իրավիճակը ստիպում է, եւս մեկ անգամ արժեւորել կրթությունը, եւս մեկ անգամ արձանագրել, որ մեզնից յուրաքանչյուրը պետք է մշտապես բաց լինի նորը սովորել, իր գիտելիքներն ու հմտությունները թարմացնել:

Մեր շրջանավարտներից «Վերջին զանգի» ղողանջով մուտք է գործել մի նոր աշխարհ 5 սամշվիլդեցի տղա: Ցանկանում ենք, որ երիտասարդների անփորձությունը երբեք խոչընդոտ չլինի մեծ բարձունքներ գրավելու եւ բազում հաղթանակների հասնելու ճանապարհին: Որովհետեւ նաեւ նրանցով է պայմանավորված մեր հայրենիքի հզորությունն ու բարօրությունը:

Այս տարի Սամշվիլդեի հանրակրթական դպրոցի շեմը հատեց երեք առաջին դասարանցի՝ երկու տղա եւ մեկ աղջիկ: Նրանք իրենց մանկական երազներով, խաղիկներով ու երգերով կսովորեն Մեսրոպյան այբուբենն ու կծանոթանան հրաշք թվերի աշխարհին:

- Սիրելի' առաջին դասարանցիներ, դուք ոտք եք դնում նոր ու հետաքրքիր մի աշխարհ: Մաղթում եմ, որպեսզի դպրոցական տարիները դառնան ձեր կյանքի ամենալուսավոր, հիշարժան ու անհոգ տարիները:

Բարի գալուստ գիտելիքների աշխարհ...

Շնորհավորում եմ բոլորիդ...

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ*

*Սամշվիլդեի հանրակրթական դպրոցի տնօրեն*

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ՝ ԲԱՐԵԿԵՑԻԿ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ



Ախալցիխեի թիվ 3 հանրային դպրոցը մի մեծ կրթօջախ է, որտեղ ուսուցիչների գլխավոր դերը աշակերտների մեջ հայրենասիրություն, ճշմարտախոսություն եւ ազնվություն սերմանելն է: Դպրոցը աշակերտներին առաջարկում է հոգատար, բարեկեցիկ եւ անվտանգ միջավայր: Այստեղ մանկավարժները գործի են դնում իրենց սիրտն ու միտքը, որպեսզի մեր ապագան կառուցվի ամուր հիմքերի վրա, լինի հնարավորին գեղեցիկ եւ լուսավոր:

Չնայած համավարակի պատճառով ստեղծված իրավիճակի՝ 2020-2021 ուստարվա ընթացքում մեր աշակերտներն ակտիվ մասնակցել են դպրոցական միջոցառումների եւ օլիմպիադաների: Բարձր առաջադիմություն ունեցող մեր աշակերտները ստացել են համակարգիչներ եւ իրենց հաջողություններով շարունակել պատիվ բերել բերել մեր դպրոցներին: Շրջանավարտներից չորսը՝ Սուսաննա Ավագյանը, Արթուր Միրանյանը, Շուշանիկ Տոնոյանը եւ Հարություն Դանելյանը ընդունվել են երկրի տարբեր բուհեր եւ ստացել 100% ֆինանսավորում:

Հուրախություն բոլորիս, «Վրաստան» թերթի միջոցով տեղեկացնում ենք, որ այս տարի դպրոց է հաճախելու 50 առաջին դասարանցի, եւ ամեն ինչ կարվի, որպեսզի նրանց թե' մտավոր եւ թե' ֆիզիկական ու սոցիալական հմտությունները գտնվեն բարձր մակարդակի վրա:

*ՍՈՒՍԱՆՆԱ ԱԿՈՊՈՎԱ*

*Ախալցիխեի թիվ 3 հանրային դպրոցի տնօրեն*

## ԴՊՐՈՑԸ ԿԱԶՄ ՈՒ ՊԱՏՐԱՍՏ Է ՆՈՐ ՈՒՍՏԱՐՈՒՆ

*Մառնեուլիի մունիցիպալիտետի հայաբնակ Չանախչի գյուղի մանկավարժները եւ դպրոցականները հույս ունեին, որ 2021-2022 ուստարին կդիմավորեին նոր դպրոցում, բայց, ցավոք, որոշ խանգարող հանգամանքներ՝ եղանակները, շինանյութը գյուղ հասցնելու բարդությունները, համավարակը դանդաղեցրին դպրոցական նոր շենքի շինարարության ինտենսիվ գործընթացը, որ սկսվել էր անցյալ տարվանից:*



Ինչպես մեզ հետ հեռախոսազրույցում հավաստիացրեց Չանախչիի հանրային դպրոցի տնօրեն Մանանա Մանուկյանը, ամենայն հավանականությամբ, նորակառույց դպրոց տեղափոխումը կիրականանա տարվա 2-րդ կեսին:

Նախկին դպրոցի վթարային լինելու պատճառով, 2004թ. ցայսօր տնակներում գործող մանկավարժական կոլեկտիվը բավական փորձ է կուտակել նույնիսկ այդ պայմաններում ուսումնական տարին կազմակերպված դիմավորելու համար:

Կրթօջախն այս տարի ունի 5 առաջին դասարանցի, աշակերտների քիչ քանակը, սակայն, չի նվազեցնում աշխատելու եռանդը, որ մշտապես եղել է թիմի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի բնականոն գործելաձեւը: Այնպես որ, դպրոցը կազմ ու պատրաստ է նաեւ 2021-2022 ուստարուն: Համատեղ ջանքերով իրականացվել են կորոնավարակը կանխող հանձնարարականները՝ դիմակ, ախտահանիչ պարագաներ, սոցիալական հեռավորության եւ այլ հիգիենիկ միջոցների ապահովում: Անհրաժեշտ դասագրքերը Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունից արդեն ստացվել են, շուտով կստանան կամ էլ արդեն ստացել են նաեւ Հայաստանից սպասվող՝ «Այբբենարան», «Մայրենի լեզու», «Հայ գրականություն» դասագրքերը:

Առաջնային ու ամենամեծ ցանկությունը, որ ունեն կրթօջախի տնօրենը, մանկավարժները, ծնողները, նոր ուսումնական տարին դասարաններում անցկացնելն է:

*ՄԱՆԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

*Մառնեուլիի մունիցիպալիտետի Չանախչի գյուղի հանրային դպրոցի տնօրեն*

## ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

*Ողջ աշխարհում տարածված «COVID-19» համավարակն արդեն երկրորդ տարին է՝ իր պայմաններն է թելադրում կրթական համակարգին՝ աճող սերնդին զրկելով դպրոցում, դասասենյակներում դասին մասնակցել, ընկերների հետ շփվել:*



Այդուհանդերձ, 2021թ. հոկտեմբերի 5-ին արտակարգ եռուզեռ էր տիրում Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնում:

Կենտրոնի «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի սաները, իրենց ծնողների եւ ուսուցիչների ուղեկցությամբ Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում մասնակցեցին առավոտյան ժամերգությանը:

Թեմի փոխառաջնորդ Տեր Նշան վարդապետ Հմայակյանի ղեկավարությամբ եւ Տեր Սամվել քահանա Թորոսյանի ու սարկավագ Եղիշե Հարությունյանի մասնակցությամբ կատարվեց Մանուկների օրհնության կարգ:

«Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանում ուրախ խաղերով, հետաքրքիր պարապմունքներով եւ զվարճալի մուլտֆիլմերով իրենց օրը կանցկացնեն երեք տասնյակից ավելի մանուկներ:

Հոկտեմբերի 5-ին սիրով իրենց սաներին դիմավորեցին նաեւ Վիրահայոց թեմի՝ Բաթումիի «Ալեքսանդր Մանթաշյանց», Ռուսթավիի «Սուրբ Գրիգոր Նարեկացի», Նինոծմինդայի «Ռաֆայել Ջավախ», Ախալքալաքի «Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի», Ախալցիխեի «Վարդգես Սուրենյանց» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնները:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*

COVID - 19

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ստորագրել է կարգադրություն, ըստ որի, հանրակրթական դպրոցներում պատվաստում չանցած աշխատակիցները պարտավոր կլինեն յոթ օրը մեկ անգամ անցնել արագ հակագենի թեստավորում, իսկ լրիվ պատվաստված աշխատակիցներն այդ ընթացակարգն անցնելու են երկու շաբաթը մեկ անգամ:*

Թեստը կարող է իրականացվել դպրոցի բժշկի կամ հատուկ այդ նպատակով վերապատրաստված այլ անձնակազմի կողմից: Երկու դեղաչափով պատվաստված անձնակազմը անվճար կթեստավորվի յուրաքանչյուր 14 օրը մեկ՝ ՊՇՌ մեթոդով:

Բացառություններ կթույլատրվեն, երբ կրթության նախարարության կողմից միջնորդություն լինի թեստավորման անհնարինության կամ հաստատությունում աշխատող անձանց հեռակա աշխատանքի մասին:

Բացի այդ, հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել կառավարության նոր կարգադրությունը, ըստ որի, պետության կողմից ֆինանսավորվող ութ այցերի ընթացքում հղիները կկարողանան անցնել ՊՇՌ թեստավորում, որը նույնպես կֆինանսավորվի պետության կողմից:

## ԱՄԻՐԱՆ ԳԱՄԿՐԵԼԻՁԵ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՏԹԱՐԱՆՈՒՄ Է ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ»

### ՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 29,3 ՏՈԿՈՍԸ ԼԻՈՎԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է

*Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամկրելիձեի հայտարարությամբ, վերջին մեկ ամսվա ընթացքում համաճարակային իրավիճակի կայուն բարելավումից հետո, վերջին երեք օրերի ընթացքում նկատվում է իրադրության վատթարացում:*



- Շատ ուշագրավ է այն փաստը, որ մենք կամաց-կամաց սկսում ենք տեսնել դեպքերի աճ: Հետեւաբար, միայն զանգվածային պատվաստումը կդադարեցնի այս գործընթացը,- ասաց վարակաբանը:

Հիշեցնենք, որ վերջին երեք օրերի ընթացքում Վրաստանում օրական գրանցվում է կորոնավիրուսով վարակման ավելի քան 2000 դեպք:

Անդրադառնալով պատվաստման թեմային՝ Ամիրան Գամկրելիձեն նշեց, որ անընդհատ թարմացվող տեղեկատվության համաձայն, սեպտեմբերին Վրաստանում ընդհանուր առմամբ կատարվել է 544,047 պատվաստում: Հոկտեմբերի 5-ի դրությամբ չափահաս բնակչության միայն 29,3 տոկոսը լիովին պատվաստվել է: Թեպետ միայն հոկտեմբերի առաջին 5 օրերին կորոնավիրուսը խլել է 164 մարդու կյանք:

Հիշեցնենք, որ Վրաստանը կորոնավիրուսի 4-րդ՝ «Դելտա» շտամի հաղթահարման փուլում է:

Այդուհանդերձ, օրեր առաջ երկրի գլխավոր վարակաբանը հաղորդեց, որ նոյեմբերի վերջին հնարավոր է սկսվի հինգերորդ ալիքը:

Միեւնույն ժամանակ, ահազանգում են նաեւ կորոնավիրուսի դեմ պատվաստման տեմպի նվազեցման մասին, բնակչությանը հորդորելով պատվաստվել՝ սպասվելիք ալիքը հեշտ հաղթահարելու համար:

## ԿՊԱՏՎԱՍՏՎԵՆ ՆԱԵՎ 12-15 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԸ

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի հայտարարությամբ, Վրաստանը թույլատրել է 12-15 տարեկան երեխաների պատվաստումը: Այս փուլում խոսքը միայն քրոնիկ հիվանդություններ ունեցող երեխաներին է վերաբերում:

Հիշեցնենք, որ հուլիսին Վրաստանը «Pfizer»-ով պատվաստումների համար առաջարկվող տարիքը իջեցրեց 18-ից մինչեւ 16 տարեկան: Չինական «Sinovac» եւ «Sinopharm» պատվաստանյութերը հասանելի են 18 տարեկանից բարձր քաղաքացիներին, իսկ «AstraZeneca»-ն՝ 45-ից բարձր տարեկաններին:

*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ 237 ՄԻԼԻՈՆԸ

*COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 237 581 239-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 4 849 802-ը: Ապաքինվել է 214 666 121 մարդ:*




Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **45 021 267** դեպք: Այստեղ մահացածների թիվը **730 206** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **33 915 569**-ի, մահացածներինը՝ **450 160**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **21 532 558**, մահացել՝ **599 865** մարդ: **Մեծ Բրիտանիայում** կորոնավիրուսով վարակվել է **8 046 390**, վարակի հետեւանքով մահացել՝ **137 417** մարդ: Մեծ Բրիտանիային հաջորդում են Ռուսաստանը, Թուրքիան, Ֆրանսիան, Իրանը, Արգենտինան ու Իսպանիան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **269 874-ի**, մահացածներինը՝ **5 499-ի**, ապաքինվածներինը՝ **246 659-ի**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը **489 226** է: Վարակից մահացել է **6 625,** ապաքինվել՝ **469 665** մարդ:

**Վրաստանում,** վերջին տվյալներով, վարակվել է **628 719,** մահացել՝ **9 192**, ապաքինվել՝ **597 654** մարդ:

*Հոկտեմբերի 8-ին կորոնավիրուսով վարակման **2 661** նոր դեպքերից **803-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 105, Իմերեթիում՝ 559, Քվեմո Քարթլիում՝ 158, Շիդա Քարթլիում՝ 116, Գուրիայում՝ 53, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 293, Կախեթիում՝ 420, Մցխեթա-Մթիանեթիում՝ 58, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 36, Սամցխե-Ջավախեթիում՝ 60:***

***Հոկտեմբերի 8-ի դրությամբ, մահացել է 30 մարդ:***

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՎՈՒՄ ԵՆ

*Վրաստանում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված՝ հանվում են համերգների եւ փառատոնների անցկացման հետ կապված սահմանափակումները:*

Այդ մասին որոշումն ընդունվել է միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստում:

Միաժամանակ, ամբողջ երկրում սննդի կետերը բաց կլինեն մինչեւ ժամը 23:00-ն, իսկ ռեստորանների աշխատանքը թույլատրված էր մինչեւ 22:00-ն:

IMEDI TV

## ԳԻԱ ՋԱՋԱՆԻՁԵԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԵՐԵՎԱՆԻՑ

*Վրացի «IMEDI TV»-ի հանրաճանաչ հեռուստաշրումեն Գիա Ջաջանիձեն այս անգամ հանդիսատեսին ողջունեց Երեւանից:*



«Իմեդի» (Հույս) հեռուստաալիքի «Սխվա ռակուրսի» (Այլ տեսանկյուն) հերթական, սեպտեմբերի 23-ի հաղորդումը նվիրված էր երեւանաբնակ վրացական համայնքի առօրյային: Շոու ծրագրի վարող Գ.Ջաջանիձեի առաջին հյուրը Ալեքսանդր Լիսուչենկոն էր, ով ծնվել ու մեծացել էր Թբիլիսիում, ստացել միջնակարգ ու բարձրագույն կրթություն, սակայն այժմ, հանգամանքների բերումով, ընտանիքի հետ բնակվում է Երեւանում եւ աշխատանքի է անցել 2 տարի առաջ բացված ու մայրաքաղաքի հյուրերի շրջանում լայն ճանաչում ձեռք բերած «Կոնյակ» հյուրանոցում: Հաղորդման հաջորդ հյուրը Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտաշխատող Հարություն Խուդանյանն էր: Վերջինս խոսեց հայ-վրացական դարավոր բարեկամության մասին, փաստեց, որ մեր ժողովուրդները, պատմականորեն դժվար ժամանակներում, միշտ իրար սատարել են, հայ-վրաց բարեկամությունը հատկապես զարթոնք է ապրել Հերակլ Երկրորդ թագավորի գահակալության տարիներին: Պատմաբան Խուդանյանն ինքնուս սովորել է վրացերեն եւ հաղորդման ընթացքում նա արտահայտվեց վրացերեն՝ իր սերը դրսեւորելով վրաց ժողովրդի, Վրաստանի եւ նրա մշակույթի հանդեպ, ինչպես նաեւ հիանալի կատարեց վրացական հայտնի երգեր «Ով տուրփավ, տուրփավն» ու «Չակրուլոն»: Նա գոհունակությամբ նշեց իր վրաց բարեկամների եւ Թբիլիսի, Թելավի, Բաթումի, Մցխեթա այցելությունների մասին:

Հանդիպման հաջորդ «կանգառը» Երեւանի Սարյան փողոցի համար 22-ն էր, ուր գտնվում է Հայաստանի «Իվերիա» վրացական բարեգործական համայնքի պաշտոնավայրը: Վրացական «Իվերիա» կազմակերպությունը սկսել է գործել 1997 թվականից (հիմնադիր՝ ակադեմիկոս, ֆիզիկոս Թինաթին Ասաթիանի (1918-2011թթ.), իսկ մեկ տարի անց, արմատներով Թբիլիսիից, թարգմանիչ Մաղվալա Սահակյան-Գեուրկովան (1942-2019թթ) համայնքին կից հիմնադրել է կիրակնօրյա դպրոց, եղել է առաջին ուսուցչուհին եւ վարել վրացերենի դասընթացներ: «Իվերիայի» ներկայիս ղեկավար, լեզվաբան Սվետլանա Նամչեւաձեն ընդգծեց, որ բացի վրացիներից, համայնքի ակտիվ անդամներ են նաեւ վրացական արմատներով մարդիկ ու հայեր, ովքեր Վրաստանից են: Այնուհետեւ կիրակնօրյա դպրոցի սաները, այդ թվում՝ հայեր, արտասանեցին վրաց մեծերի բանաստեղծություններից, երգեցին ու պարեցին: «Իվերիա» կազմակերպության փոխնախագահ, Վրաստանի գրողների միության անդամ, «Մշակույթի դեսպան», բանաստեղծուհի Նինո Սպանդերաշվիլին պատմեց համայնքի գործունեության մասին, որ Հայաստանում բնակվող քչաքանակ ազգային փոքրամասնությունները հնարավորություն ունեն զարգացնել սեփական մշակույթը, կարեւորեց համայնքի կողմից հրատարակված գրքերի նշանակությունը, մասնակցությունը՝ «Բանաստեղծական թարգմանությունների հատընտիր» (հեղինակ՝ Ալեքսանդր Էլերդաշվիլի) ժողովածուի հրատարակմանը, որը ներառում է 15-րդ դարից մինչեւ մեր օրերն ավելի քան 50 լեզուներից վրացերեն թարգմանված 300 պոետական ստեղծագործություններ: Տիկին Նինոն ներկայացրեց սեփական բանաստեղծությունները, հպարտությամբ ընդգծեց, որ իր գործերից շատերը թարգմանվել են հայերեն ու իր բառերով ստեղծվել է 8 երգ:

Հաղորդման ընթացքում հեռուստադիտողը հնարավորություն ունեցավ դիտել Երեւանի տեսարժան վայրերը, մասնավորապես՝ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի հրապարակը, Սիրո զբոսայգին, ուր կանգնած է հանրահռչակ Առնո Բաբաջանյանի արձանը, Հյուսիսային պողոտան, որտեղ այսպես կոչված փողոցային երգչի հետ պարոն Գիան կատարեց «Մանուշակ էի պարտեզում բացված» երգը: Ի դեպ, երգի հեղինակը թբիլիսցի ակորդեոնիստ Վլադիմիր Ոսկանյանն է:

Տպավորիչ հանդիպումն ավարտվեց «Սարդարապատ» համույթի վրացական ու հայկական պարերի կատարումով:

Հատկանշական է, որ վրացական ամենադիտվող «Իմեդի» հեռուստաալիքի եթերով հեռարձակվող «Սխվա ռակուրսի» հաղորդումը մեկ անգամ եւս կարեւորեց մեր երկու ժողովուրդների միջեւ սերնդեսերունդ փոխանցվող բարեկամական ու եղբայրական հարաբերությունները, այն, որ ինչպես անցյալում, այնպես էլ՝ ներկայում ու ապագայում մեր ժողովուրդների բարեկեցությունը պայմանավորված է փոխադարձ սիրով եւ բարիդրացիական հարաբերություններով:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԼԻՏՎԱ



*Հոկտեմբերի 3-4-ը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այցով գտնվում էր Լիտվայում:*

Այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետը հանդիպեց Լիտվայի նախագահ Գիտանաս Նաուսեդայի, Լիտվայի վարչապետ Ինգրիդա Շիմոնիտեի եւ Սեյմասի նախագահ Վիկտորյա Չմիլիտե-Նիելսենի հետ: Հայաստանի վարչապետը, պատվիրակության անդամների հետ, ծաղկեպսակ դրեց Լիտվայի անկախության համար զոհվածների հուշակոթողին:

Հայաստանի վարչապետի եւ Լիտվայի նախագահի հանդիպմանն անդրադարձ է կատարվել Եվրոպական միության Արեւելյան գործընկերության ծրագրի շրջանակում համագործակցությանը, ԵՄ-ի կողմից Հայաստանի համար նախատեսված 2,6 մլրդ եվրո փաթեթի արդյունավետ իրականացմանը, Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացներին: Լիտվայի նախագահն իր երկրի աջակցությունն է հայտնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ջանքերին:

Հայաստանի եւ Լիտվայի վարչապետերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների խորացման եւ ամրապնդման հետ առնչվող հարցեր: Բանակցությունների ավարտից հետո, Նիկոլ Փաշինյանը եւ Ինգրիդա Շիմոնիտեն հայտարարություններով հանդես եկան համատեղ մամուլի ասուլիսին, պատասխանեցին ԶԼՄ ներկայացուցիչների հարցերին:

Այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետն այցելեց Արեւելյան Եվրոպայի հետազոտությունների կենտրոն, ինչպես նաեւ ծանոթացավ լիտվական հաջողակ ընկերությունների փորձին:

Հոկտեմբերի 3-ի երեկոյան Հայաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Լիտվայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, իսկ հոկտեմբերի 4-ին Նիկոլ Փաշինյանը Կաունաս քաղաքում ներկա գտնվեց Հայաստանի Անկախության 30-ամյակին եւ հայ-լիտվական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին նվիրված համերգին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՑՈՎ ԳՏՆՎՈՒՄ ԷՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

*Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը հոկտեմբերի 5-8-ը պետական այցով գտնվում էր Իտալիայում:*



Այցի շրջանակներում, Հայաստանի նախագահը Իտալիայի Հանրապետության նախագահի նստավայրում` Քուիրինալի պալատում, հանդիպում ունեցավ Իտալիայի նախագահ Սերջիո Մատարելլայի հետ: Նախագահների առանձնազրույցին հաջորդեց պատվիրակությունների հանդիպումը` ընդլայնված կազմով, ապա Հայաստանի եւ Իտալիայի նախագահները հանդես եկան մամլո հայտարարությամբ:

Արմեն Սարգսյանը պետական այցի շրջանակներում հանդիպումներ ունեցավ նաեւ Իտալիայի նախարարների խորհրդի նախագահ Մարիո Դրագիի, Իտալիայի Սենատի նախագահ Մարիա Էլիզաբետա Կազելատիի, Պատգամավորների պալատի նախագահ Ռոբերտո Ֆիկոյի, Հռոմի քաղաքապետի հետ:

Արմեն Սարգսյանը հյուրընկալվեց նաեւ Հռոմի Լեւոնյան վարժարանում, որտեղ հանդիպում ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հռոմի Լա Սապիենցա համալսարանում Արմեն Սարգսյանը ներկա գտնվեց հայագիտության ամբիոնի վերաբացման արարողությանը, ինչպես նաեւ դասախոսությամբ հանդես եկավ Բոլոնիայի համալսարանում:

Պետական այցի շրջանակներում, Արմեն Սարգսյանը մասնակցեց Հայաստանի եւ Իտալիայի նախագահների հովանու ներքո, Իտալիայի նախագահի նստավայրում` Քուիրինալի պալատում, մեծանուն հայ նկարիչներ Հովհաննես Այվազովսկու, Գեւորգ Բաշինջաղյանի, Մարտիրոս Սարյանի, Վարդգես Սուրենյանցի, Հակոբ Կոջոյանի աշխատանքների ցուցադրության բացմանը:

Նշենք, որ նորանկախ Հայաստանի 30-ամյա պատմության ընթացքում սա Հայաստանի նախագահի առաջին պետական այցն է Իտալիա:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ



*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը հոկտեմբերի 5-ին մեկնեց Հռոմ (Իտալիա)` մասնակցելու Սանտ Էջիդիոյի համայնքի կողմից կազմակերպված «Մարդիկ որպես եղբայրներ եւ երկրի ապագան` կրոններն ու մշակույթները երկխոսության մեջ» խորագրով համաժողովին եւ միջեկեղեցական աղոթքին:*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը հոկտեմբերի 6-ին Վատիկանում հանդիպեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձել է 44-օրյա պատերազմի աղետալի հետեւանքներին եւ շնորհակալություն հայտնել Սրբազան Քահանայապետին պատերազմի ընթացքում հայ ժողովրդին եւ Հայաստանին ցուցաբերած աջակցության համար:

Հանդիպման ավարտին Հռոմի Քահանայապետն իր օրհնությունն է բաշխել Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակության անդամներին:

Հռոմում Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունը հանդիպում է ունեցել նաեւ Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պետրո Պարոլինի հետ:

## ՖՐԵԶՆՈՅԻ ԲԺԻՇԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Հայաստանի մարզերի կարիքավոր բնակիչներին եւ Արցախյան պատերազմում վիրավորվածներին բժշկական օգնություն եւ խորհրդատվություն տրամադրելու նպատակով Հայաստանում է Ֆրեզնոյից ժամանած բժիշկների խումբը:*



Խումբը Հայաստանում է  Ֆրեզնոյում Հայաստանի պատվավոր հյուպատոս Պերճ Ազգարյանի նախաձեռնությամբ: Երկշաբաթյա այցի շրջանակում ԱՄՆ բազմափորձ բժիշկների պատվիրակությունը /ֆիզիոթերապիստ, սրտաբան, ատամնաբույժ, ընդհանուր վիրաբույժ եւ այլն/ բժշկական անվճար հետազոտություններ է իրականացրել տարբեր մարզերում: ԱՄՆ-ից ժամանած մասնագետները հայ գործընկերներին են փոխանցում ոլորտի առաջադեմ փորձը` նրանց հետ կիսելով իրենց մասնագիտական կարողություններն ու հմտությունները:

- Արդեն վեցերորդ անգամ եմ Հայաստան գալիս: Այս անգամ մեր պատվիրակությունը 40 մասնագետից էր բաղկացած: Տարբեր կլինիկաներից ենք, մեր խմբում ոչ միայն հայեր, նաեւ այլազգի բժիշկներ կան,- տեղեկացրեց Ֆրեզնոյի Սուրբ Ագնես ու համայնքային հիվանդանոցի ինտերնիստ Արա Սողոմոնյանը, ով Լաուր ու Ջոն Փութնամների հետ եռօրյա բուժզննում ու բժշկական միջամտություններ է իրականացնում Գյումրիում:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ



*Հոկտեմբերի 1-ին Հայաստանի նախագահի նստավայրում կայացավ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը: Ինչպես տեղեկացնում է Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչությունը, հանդիպմանը քննարկվել են արտաքին եւ ներքին մարտահրավերների հաղթահարմանը, կառավարության առաջնահերթություններին, 2022 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող ծրագրերին վերաբերող հարցեր:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

*Հոկտեմբերի 4-ին, Հայաստանի ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը, եռօրյա պաշտոնական այցով, մեկնեց Ռուսաստանի Դաշնություն:*

*Այցի շրջանակում, Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՌԴ Պետական դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի, ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի, ՌԴ Դժ Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հետ:*

*Հայաստանյան պատվիրակությունը հյուրընկալվեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին:*

*Պաշտոնական այցի վերջին ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ ՌԴ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:*

### ԵՐԵՎԱՆ-ԷՐԵԲՈՒՆԻ ՏՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

*Երեւանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի որոշմամբ, Երեւանի ծննդյան 2803-ամյակին ընդառաջ կկազմակերպվի մաքրման շաբաթօրյակ, որտեղ մասնակցություն կունենան ցանկություն ունեցող բոլոր երիտասարդները: Այս մասին նշված է քաղաքապետարանի տարածած հաղորդագրության մեջ:*

### 3.626 ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ ՏՐՎԵԼ Է ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

*Հայաստանում ընթացիկ տարվա առաջին կիսամյակում կացության կարգավիճակ է ստացել 3 հազար 626 օտարերկրացի` ավելի քան 30 երկրից, այդ թվում` 993-ը Հնդկաստանից, 722-ը` Ռուսաստանի Դաշնությունից, 471-ը` Իրանից, 150-ը` Ուկրաինայից, 141-ը` Լիբանանից, 134-ը` Վրաստանից, 120-ը` Իրաքից:*

*Հայաստանում կացության կարգավիճակները տրամադրվում են տարբեր հիմքերով` ընտանիքի հետ միավորում (499), ուսման (1 295), աշխատանքի (491), ձեռնարկատիրական գործունեության (68) եւ ազգությամբ հայ լինելու (43):*

*Հնդկաստանի 882 քաղաքացու կացության կարգավիճակ է շնորհվել ուսման հիմքով, 52-ին` աշխատանքի: Իրանի 120 քաղաքացու կացության կարգավիճակ է շնորհվել ուսման հիմքով, 114-ին` աշխատանքի:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ



*11.10.2021 Աղվանքի Սուրբ Գրիգորիս կաթողիկոսի նշխարների գտնվելու, Թաթուլ եւ Վարոս, Թումաս, Անտոն, Կրոնիդես սուրբ հայրերի եւ յոթ խոստաճարակների հիշատակության օր*

*16.10.2021 Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես Ավետարանիչների հիշատակի տոն*

*Մատթեոսը Տիրոջ 12 առաքյալներից է, առաջին Ավետարանի հեղինակը: Մատթեոս անունը հունական է, այն եբրայերեն Ղեւի անունն է, որ նշանակում է Աստվածատուր:*

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

## ՁՆԱՏԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԼԱՐՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՓԱԿՎԵԼ ԷՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության տեղեկատվությամբ, առատ ձնատեղումների պատճառով Լարս տանող ճանապարհը ժամանակավորապես, երկու ժամով փակվել էր: Բացի այդ, Ռուսաստանի «Լարս» մաքսակետում ընթացող վերանորոգման/վերականգնման աշխատանքների պատճառով ապրանքների ներմուծում / արտահանումը Վրաստանի մաքսային տարածք, ինչպես նաեւ սահմանը հատող ֆիզիկական անձանց համար մաքսային անցակետը,





մաքսային հսկողության ընթացակարգերը աշխատում են խափանումներով:

Վրացական կողմից ընթացակարգերն իրականացվում են սահուն:

## ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՓԱԿ Է

***Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման (Մ-6) միջպետական նշանակության ավտոճանապարհի 32-րդ կմ-ին՝ Վանաձորից Ալավերդի տանող հատվածում, հոկտեմբերի 6-ին տեղի է ունեցել քարաթափում, ինչի հետեւանքով ճանապարհը միակողմանի փակ է:***

Ստացված տեղեկատվության համաձայն, այժմ կապալառու կազմակերպության կողմից իրականացվում են ճանապարհի մաքրման աշխատանքներ՝ երկկողմանի անցանելիությունն ապահովելու նպատակով:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

## ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ԹԲԻԼԻՍՈԲԱՆ» ԱՅՍ ԱՆԳԱՄ ԿՆՇՎԻ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԿՀԵՏԵՎԵՆ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՎ»

*Ինչպես արդեն հաղորդել էինք, սեպտեմբերի 30-ին Թբիլիսիի քաղաքապետարանը, ելնելով համավարակային իրավիճակից, որոշում էր ընդունել այս տարի չանցկացնել Թբիլիսիի ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան»: Սակայն համակարգող խորհրդի կողմից վերջերս ընդունած սահմանափակումների որոշակի մեղմացման վերաբերյալ որոշումը քաղաքապետարանին հնարավորություն տվեց, ճիշտ է՝ որոշակի սահմանափակումներով, բայցեւայնպես անցկացնել «Թբիլիսոբան»*





Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի տոնը՝ «Թբիլիսոբան», այս տարի կնշվի, սակայն փոփոխված ձեւաչափով: Տոնական համերգը կանցկացվի հոկտեմբերի 24-ին, Մթածմինդայի այգում: Սակայն հաշվի առնելով երկրում տիրող համաճարակային իրավիճակը եւ համապատասխան կանոնակարգերը, համերգը տեղի կունենա առանց հանդիսատեսի եւ կցուցադրվի ուղիղ եթերով:

Համերգային ծրագիրը ներառում է Թբիլիսիին նվիրված՝ հանրության կողմից սիրված եւ հայտնի երգերի նոր տարբերակներ:

«Թբիլիսոբային» նվիրված միջոցառումների համար, այս տարի կծախսվի 498 500 լարի (մոտ 158,5 հազար դոլար):

Թբիլիսիի քաղաքապետարանը պարզաբանեց, որ պետական տոներին նվիրված միջոցառումները, այդ թվում՝ Թբիլիսոբան, ունեն պետական եւ հասարակական կարեւոր նշանակություն, եւ դրանց բարձր մակարդակով անցկացումը ծառայում է երկրի սոցիալական, մշակութային եւ հանրային այլ կարեւոր նպատակների իրականացմանը:

- Ցանկանում եմ տեղեկացնել, որ մենք կունենանք պատվավոր թբիլիսցիների պարգեւատրման միջոցառում, եւ դուք կարող եք ուղիղ եթերով հետեւել համերգին,- սեպտեմբերի 29-ին ասել է քաղաքապետ Կախա Կալաձեն:

Հիշեցնենք, որ 2021 թվականի հոկտեմբերի 5-ին համակարգող խորհուրդը որոշեց հանել օգոստոսի 14-ից ուժի մեջ մտած համերգների եւ փառատոների սահմանափակումները:

ՖՈՒՏԲՈԼ





## ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՎՃՌՈՐՈՇ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

***Աշխարհի առաջնության որակավորման փուլի եվրոպական «B» եւ «J» խմբերում հանդես եկող Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները խմբային 6-րդ հանդիպումներն կանցկացնեն հոկտեմբերի 8-ին եւ 9-ին:***

Եվրոպական «B» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը հոկտեմբերի 9-ին ընդունելու է Հունաստանի հավաքականին: Հիշեցնենք, որ Վրաստանը մեկ միավորով եզրափակում է մրցաշարային աղյուսակը, որը 13 միավորով գլխավորում է Իսպանիայի հավաքականը:

Վերջին երկու հանդիպումներում կորցրած միավորներից հետո, Հայաստանի հավաքականը «J» խմբի առաջին հորիզոնականը զիջեց Գերմանիային (15 միավոր) եւ 11 միավորով զբաղեցրեց երկրորդ տեղը:

Խմբի 6-րդ հանդիպումը Հայաստանի թիմը հոկտեմբերի 8-ին կանցկացնի մրցակցի դաշտում՝ ուշ երեկոյան իր ուժերը չափելով Իսլանդիայի հավաքականի հետ:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Վրացի հայտնի նախկին ֆուտբոլիստ: 5.Ե՛վ գետ, ե՛ւ լիճ Վրաստանում: 10.Անապատային կենդանի: 11.Ոխերիմ թշնամի: 14.Գործիմաց, վարպետ, բանիմաց: 15.Վիրահայ երգչուհի, Սուրբ Գեւորգ եկեղեցու երգչախմբի ղեկավարը: 17.Գյուղից մեծ բնակավայր: 20.Ստորադասական շաղկապ: 21.Լիճ Շոտլանդիայում՝ Լոխ ...: 22.Վրաց սպորտի վարպետ, ծանրորդ, Օլիմպիական խաղերի չեմպիոն: 24.Տոթ, խեղդող, արեւոտ եղանակ: 26.Խոտակեր կենդանի: 28.«Անց են կենում սեր ու խնդում, գեղեցկություն, ... ու գահ» (Հովհ.Թումանյան): 30.Կծող, օգտակար բույս: 33.Հրաշքների աշխարհի աղջիկը: 35.Մասիս, Սիս, Աբուլ: 36.ՌԴ արտիստ, շոումեն, հումորիստ: 39.... եւ ահյակ: 40.Շուտ, կանուխ: 41.Ավտոմեքենայի մաս: 43.Հարցական դերանուն: 44.Քաջ, կորովի: 45.Հրաբխի ժայթքածը: 46.Աչքի մաս: 47.Լիքը, լեցուն: 49.Մակերեսի չափման միավոր: 50.Ետադաս կապ: 52.Լ.Շանթի գրական հերոսուհի: 54.... ու գրականություն: 56.Մրգի տեսակ: 57.Սար գնացող, սարում աշխատող: 58.Անգլիացի գրող ... Ռիդ: 59.... ու պանիր: 61.Քարքարոտ, անհարթ հունով գետուղի: 62.Ղեղձից անուշեղեն: 63.Սխալ, ոչ ճիշտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հրատապ, շտապ լուծում պահանջող: 3.Քիմիական տարր: 4.Մուլտֆիլմի հերոս: 6.Երեւանյան թերթ: 7.Հանրահայտ արվեստագետ, ոսկերիչ, նկարիչ դիզայներ ... Նուռ: 8.Ավ.Իսահակյանի ստեղծագործություններից: 9.Եվրոպացու եւ նեգրի հիբրիդը: 12.Վրաց հասարակական գործիչ Սուլխան ...: 13.Հայ Առաքելական եկեղեցու 128-րդ կաթողիկոսը ... Տփխիսեցի: 16.Գարնան ավետաբեր թռչուն: 18.Միլանում ծնված հռոմեացի կայսր: 19.Բուսատեսակ, որի կյանքը նման է մարդու կյանքին: 23.Սմբակավոր կենդանի: 25.Ֆրանսիացի աշխարհահռչակ մաթեմատիկոս, ֆիզիկոս: 27.Հեղուկը շշի մեջ հեշտ լցնելու հարմարանք: 29.Ելցինի կինը: 31.Ս.Փարաջանովի ֆիլմերից «Աշուղ ...»: 32.Որմնանկարիչ Մինասի ծննդավայր գյուղը: 34.Վրացական հայտնի ջրերի հեղինակը: 37.ՌԴ մակնիշի մեքենա: 38.Թուրքիայի մայրաքաղաքը: 39.Գեղեցիկ աչքերով: 40.Լավ ու ...: 42.Գետը հորդառատ անձրեւից հետո: 48.Աքլոր, որձակ: 50.Ամերիկացի ամենահայտնի մուլտֆիլմերի հեղինակ եւ ընկերության հիմնադիր: 51.Ա.Բակունցի գրական հերոս: 52.Ցուցական դերանուն: 53.Հանքը հալելու վառարան: 54.Թանկագին քար: 55.Ասիական պետություն: 56.Գետ Վրաստանում: 60.Գիշակեր թռչուն:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Անլեգալ: 9.Ժյուրի: 10.Վաչե: 11.Լիբերեց: 13.Ղալիմ: 16.Թուզ: 17.Տող: 19.Լուսան: 22.Սեդան: 24.Բիրեմա: 25.Շելֆ: 27.Անտոմս: 29.Լուսակա: 32.Եռամարտ: 33.Դանիել: 35.Սարք: 37.Ղեկ: 39.Ստնտու: 40.Աքոս: 43.Գեն: 44.Ռիսկ: 47.Ավե: 49.Մոթել: 50.Տեղը: 53.Սինի: 54.Իպր: 55.Իսկի: 57.Չեշ: 58.Ագատիչ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Կնճիթ: 2.Թերեզ: 3.Հավետ: 4.Ուժեղ: 5.Ռուալ: 6.Ֆիլմ: 8.Լացող: 12.Բուրդ: 14.Ամուր: 15.Իմամ: 18.Անեմ: 19.Լիբում: 20.Սեմարանգ: 21.Նանա: 23.Աշտիկ: 26.Լսել: 28.Նվաղ: 29.Լառ: 30.Սաստ: 31.Կտրտել: 34.Նելսոն: 36.Քուն: 38.Կով: 41.Թալիշ: 42.Սետրա: 45.Իմիջ: 46.Կթիչ: 48.Եղիա: 51.Ըստ: 52.Ճիչ: 56.Կի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445